բոյ», են. (*)։ Ժամանակակից և գործակից Սադուն աթաբէկ մեծ իշխանի, որ Մահկանաբերդի իշխանապետն էր, Հաղբատի հովանաւոր տէրը, հաւանօրէն եւ Տփխիսի ամիրան, ինչպէս նորա նախնին Քուրդ իշխանը, որ Վրաց Գէորգի III-ի, Թամարի հօր օգնականն ու զինակիցն էր ընդդէմ Օրբէլեանների ապստամբութեան (**)։ Յովհաննէս եպիսկոպոսի ներկայութիւնը Տփխիսում իբրև Հաղբատի և Մահկանաբերդի եպիսկոպոսի, միանգամայն հասկանալի է. այդ կապը պահւում էր Հաղբատի և Թիֆլիսի մէջ մինչև ԺԸ. դարու վերջերը։

Գ.

Գանձասարի երկու արձանագրութիւնները աւելի եւս պարզում են Վախտանգի անձնաւորութիւնը եւ ընդարձակում մեր տեղեկութիւնները նորա ազգակցական կապերի մասին։ Մամախաթուն և իւր «պատրոն» Ճարը ՉԺԷ = 1268 թուին միաբանում են Գանձասարի սուրբ ուխտին և ստանում բոլոր եկեղեցիների պատարագը աւագ հինգշաբթի պատրոն Ումեկի համար (***)։ Այս Մամախաթունը, որ ինչպէս կը տեսնենք, Վախտանգի մայրն է, իւր հետ ուխտի եկած Ճարին «պատրոնն իմ» է անուանած. Ղարաբաղի բարբառով, որի մասն է և Խաչենը, մինչև այժմ էլ «պատրուն» նշանակում է սկեսրայր հարսի համար. Ումեկի մի ուրիշ որդու՝ Ճարի արձանագրութիւնից էլ Գետկայ վանքում կը տեսնենք, որ Ումեկի հօր անունը, յիրաւի, Ճար էր։ Մի «պատրոն Ճար» ՌԺԱ = 1202 թուին մի խաչ է կանգնել Ճահուկի Ապարաներ կոչուած քաղաքատեղում, հաւանօրէն, նոյն Ումեկի նոյնանուն հօր հետ(****)։ Այս արձանագրութիւնից պարզ է նոյնպէս որ 1268 թուին Ումեկ արդէն մեռած էր, եւ ուրեմն կողմնակի կերպով ունինք նորա Թիֆլիսում չինած եկեղեցու terminus post quem-ը, որ ըստ պրոֆ. Յովսէփ Օրբելու 1251 թուին պիտի նշանակել չինութիւնը արաբական արձանագրութեան մնացորդի հիման վերայ (*)։

Իսկ թէ Մամախաթունը Ումեկի կինն էր, Ջալալ Խաչենեցու աղջիկը և Վախտանգի մայրը՝ պարզւում է նոյն վանքի մի երկրորդ արձանագրութիւնից. «ՉԼԵ» թուականին «նուաստ աղախին Քրիստոսի Մամախաթուն դուստր ինքնակալ իշխանաց իշխանին Ջալալ Դաւլայ Հասանին տեառն Խաչենոյ եւ բարեպաշտ մաւր իմոյ Մամքանին եւ ամուսին մեծ պարոնին Ումեկին» մեծ յուսով ուխտ է գալիս Գանձասարի վանքը իւր Վախտանգ որդու հետ եւ միաբանները խոստանում են Վարդավառի տօնի պատարագը հօրն ու մօրը՝ քանի ինքը կենդանի է, մահուանից յետոյ՝ իրեն (**)։

Ինչո՞վ նշանաւոր հանդիսացաւ կեանքի մէջ «զուարթամիտ» և գրասէր Վախտանգը, ոչինչ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա վախճանուած է 1244 թուին եւ թաղուած Վայոց Ջորի Եղեգիս աւանում, որ Օրբէլեանների իշխանութեան կեդրոններից մէկն էր, փոխանակ իւր հօր չինած եկեղեցու հովանու տակ կամ Գետկայ վանքում, որ իւր եղբօր Ճարի զերեզմանատունն էր։ Եղեգիսում թաղուելու հանգամանքն անյայտ է, բայց, գուցէ, կարելի է բացատրել նորանով, որ ազգակցական կապեր ունէր Օրբէլեանների հետ. Վախտանգի մօրաքոյրը Մինախաթուն՝ Տարսայիճ Օրբէլեանի երկրորդ կինն էր, Ստեփաննոս Օրբէլեանի խորթ մայրը (***)։ Նորա գերեզմանի արձանագիրն է.

+ Թվին ՉՂԳ. Այս է հանգիստ պարոն Վաղթանկին որդոյ պարոն Ումեկին (****)։

Վախտանգի անուան հետ կապուած մեզ յայտնի թուականների հիման վերայ կարող ենք, գրեթէ, ճշդութեամբ, որոշել

(*) Ջալալեան. Ա. 70։ Երզնկեան, «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ», Վաղարշապատ, 1886. 43։ Ստուգել ենք եւ Խաչարձանը լուսանկարել անձամբ։

(**) Մեր «Խաղբակեանք», եր. 5-6։

(***) Ջալալեան. Ա. 191։

(****) Ալիշան, Սիսական. 370. «Թվ. ՌԺԱ. կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն պատրոն Ճարին. յիշեա Քրիստոս Աստուած եւ ողորմեա»։

(*) Х. В. 1918. 198-199. Fragment krestnawo kamnia s arabskoi nadpisj w Tiplise։

(**) Ջալալեան. Ա. 186-7։

(***) Х. В. 1913. 216. մեր յօդուածը Potomstwo Tars'aica։

(****) Ալիշ. Սիսակ. 149։